

569. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. Խորակերտ վանքից ոչ հեռու, Չանախչի գյուղի արևելակողմի եկեղեցու շրջապատի գերեզմանոցում. գեղագիր, 3 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ  
ՅԵՂԱՐԻՆ: ԹՎ [ԻՆ] Ո  
ՂԸ (1649):

**Ծանոթ.** Եկեղեցին սագաշեն է, շարված ճեղքած քարով, հարավից կցված է փոքր սրահ: Գերեզմանոցում թաղումներ են արվում մինչև այժմ: Շիրմաքարերը հիմնականում աննշակ են:

570. **ՍՍԼՍՏԱՊԱՆ**. Ջիլիզայի գյուղամիջյան գերեզմանոցում, եռահատված, 8 տող.

ԿԱՅՍԷՅԱ	ԱՅՍ Է ՏԱ-
ՊԱՆ ՊԱ-	
ՐՈՆ ԽՕՍ-	
ՐՈՎԻՆ	ՐՈՎԻՆ,
ՈՐՓՈՒՆ	ՈՐ ՓՈՒՆԵ-
ՑԱԻԱՆ	ՑԱԻ ԱՐ
ԱԾ ԹՎ [ԻՆ]	ԱԾ ԹՎ [ԻՆ]
ՌԾԺ	ՌԾԺ (1661):

**Ծանոթ.** Գուցե թիվն ունի նաև միավոր, բայց քարի այդ մասը ջարդված է: Գերեզմանոցում կան արձանագիր այլ տապանաքարեր ևս՝ ջարդուվիչուր վիճակում:

571. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. Նույն գերեզմանոցում, կարմրավուն քարից, երկատված, ձեռքերը կրծքին ծալած հարթաքանդակով, 3 տող.

ԿԷ ՀԱԳՍՏ	ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
ՈՐԷԼԻ ԶԱՔԱՐԻ	ՈՐԴԵԼԻ ԶԱՔԱՐԻ
ԿԻՆ ՓԱՐԻՆԱՆԻՆ	ԿԻՆ ՓԱՐԻՆԱՆԻՆ:

Գրատ. «Լրաբեր», 1980, 3, 88:

**Ծանոթ.** Տարածված են *Փարիշան*, *Փարիճան*, *Փարիխան* իգական անձնանունները, բայց այս դեպքում *Փարիճան* է:

«ՎԵՐԻՆ ՎԵԼԱԴ» ՎԱՆՔ

Խորակերտից ոչ հեռու, Ջիլիզայից 3կմ վրա, դարավոր անտառի մեջ պահպանվում է հնամենի, մինչև 15 մ բարձրությամբ աշտարակներով Չախկալաբերդ կամ Սև բերդ հզոր ամրոցը:

Ամրոցից 1,5 կմ հեռու, Վերին Վելադ կոչվող հանդամասի մոտ մնում են բազիլիկաները՝ կիսավեր վիճակում: ճեղքած քարով շենքերը, համաձայն արևմտյան մուտքի ընկած ճակատաքարի հայերեն և վրացերեն արձանագրության, կառուցվել են ՌՃԿ – 1711 թվականին:

572. Եկեղեցու արևելյան լուսամուտի վերևի բարին, 3 տող.

ՄԲ ԽԱԶՍ

ԲԱՐԵՆԱԲ

Ս Է Ճ ԱՐՈՒՏԻՆ:

*Ծանոթ.* Գրված է մանր ու գլխագիր տառերի խառնուրդով: Ճ ԱՐՈՒՏԻՆ պետք է վերծանել ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՐՈՒՏԻՆ (Յարություն): Յոգևոր այս կառույցները ճարտարապետական ու շինարարական հատկանիշներով մնան են Եանհատակի վանքին:

573. *ՏԱՊԱՆԱՔԱՐ.* Եկեղեցու բակում, 2 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՐԲԻԵՆ՝ ՈՐԴԻ ԱԲԱՍԻՆ:

ԹՎԻՆ՝ ՈՇԻԸ (1679):

*Ծանոթ.* Շրջապատի գերեզմանոցի մի քանի տապանաքարեր ևս ունեն հայերեն ու վրացերեն արձանագրություններ:

#### Ա Ք Ո Ր Ի

Գուգարքի հինավուրց գյուղերից է, գտնվում է Ալավերդի քաղաքից 3կմ արևմուտք, բարձրադիր դարավանդի վրա:

Գյուղի առանձին տեղերում և շրջակայքում, հատկապես Երզնթալա, Գութանթալա, Կալեր, Գարդախալու, Գեղատեղ, Սարի Գեղատեղ, Դարք գյուղատեղիներում հանդիպում են եկեղեցիների, մատուռների ավերակներ, խաչքարեր ու տապանաքարեր:

Գյուղի կենտրոնում մնում է XII-XIII դդ. երկթեք լանջերով, կղմինդրածածկ Ս. Գևորգ եկեղեցին, որին XIX դ. արևմուտքից հավելվել է մի դահլիճ՝ նույնպես դրսից սրբատաշ բազալտով, ներքուստ՝ կուպտամշակ քարով շարված: Եկեղեցու շրջապատի գերեզմանոցի տապանաքարերից մեկն ունի ՈՄԾՁ (1807 թ.) հիշատակագրություն: Գյուղի «Ձույզ խաչքարերի» հատվածում կան մի այլ եկեղեցու հետքեր:

Գյուղից արևելք Ագեղցի բնակատեղին ու ավերված եկեղեցին են՝ շրջապատված ընդարձակ գերեզմանոցով: Աղոթարանն ունի հույժ հնության հատկանիշներ (անսովոր՝ մոտ 2 մ թանձրությամբ պատեր, ուղղանկյուն խորան): Գյուղից հարավ, լեռնակրճքում, Բաղրամյան ավանի հանդիման, քարանձավային համալիր է՝ ամրացված արտաքին պատերով:

Առավել նշանավոր հուշարձանը գտնվում է գյուղի հյուսիս-արևելքում, Դարք գյուղատեղիում, որը լքվել է երկրորդ աշխարհամարտից հետո: Յավանաբար բարձր ու անհարթ դիրքի շնորհիվ է բնակավայրը Դարք կոչվել: Սանահնի «Քոթուկում» պահպանվող Ջաբարյանների հրովարտակով մի շարք վայրերի հետ *անդառնալի հրամանով* այս Դարք գյուղը ևս նվիրվել է վանքին՝ *ամենայն խարժե ազատ*, որը տեղի է ունեցել վանահայր Գրիգոր Աբասորդու ժամանակ, թերևս 1220-ական թվականներով: Յայտնի է Բգալոր վանք անունով: Շուրջը կացարանների (բազեր, փոսորակներ) ավերակներ կան: Գ. Շախկյանի կարծիքով, հուշարձանի անունը այդ բազերի առկայության հետևանք է:<sup>52</sup> Եկեղեցին եռանավ, թաղածածկ շինություն է՝ կառուցված շինարարական փայլուն արվեստով: Դժբախտաբար, մեծապես տուժել է հատկապես 1988 թ. երկրաշարժից: Այս և Բգավանքի մյուս շինությունները, ցավոք, ոչ վիճական արձանագրություններ ունեն, ոչ էլ հիշատակվել են մատենագիրների մոտ, բայց կան մի քանի հիշատակագրված կոթողներ, որոնցից հնագույնները 1233, վերջինը՝ 1735 թվականի են:

<sup>52</sup> Գ. Շախկյան, Լոռի, 57: